



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱԿՅԻՆ ԱՄԵՐԻԿԱԿԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
 E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ Ս. ԱԹՈՌՈՅՍ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐԸ

Օգոստոս 14-19-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Պիքֆայայի Դպրեվանքին մէջ, հրաւերով ու նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի, տեղի ունեցաւ Երիտասարդական Համագումար, որուն խորագիրն էր «Հայ Երիտասարդը 21րդ դարու մարտահրաւերներուն դիմաց»: Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի տնօրինութեամբ, Արեւմտեան մեր թեմէն համագումարին մասնակցեցան 10 երիտասարդ-երիտասարդուհիներ, գլխաւորութեամբ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեանի:

Պատուիրակութեան անդամները Ամերիկա վերադարձան մեծ խանդավառութեամբ եւ վերանորոգուած յանձնառութեամբ, լիցքաւորուած՝ Հայ Եկեղեցւոյ արժեքներով, եւ հասակակից տարբեր երկիրներու երիտասարդներու հետ ծանօթացման քաղցր յուշերով:

Չորեքշաբթի, 17 Սեպտեմբերին, համագումարին մասնակցող երիտասարդները այցելեցին Ազգային Առաջնորդարան, իրենց երախտագիտութիւնը յայտնելու Առաջնորդ Սրբազան Հօր՝ իրենց շնորհուած այս եզակի առիթին համար, եւ Սրբազանին փոխանցելու իրենց շահած փորձառութիւնն ու տպաւորութիւնները:

Առաջնորդ Սրբազանը իր կարգին, գնահատեց անոնց գործօն մասնակցութիւնը Համագումարին, անոնց նուիրումը եւ ծառայական կեանքը Արեւմտեան մեր Թեմէն ներս, զանոնք քաջալերելով առաւել աշխուժութեամբ մասնակցելու եկեղեցական ու գաղութի մեր կեանքին:

Յայտնենք, որ յառաջիկայ Կիրակի, 21 Սեպտեմբերի առաւօտուն, Ազգային Առաջնորդարանի Կիրակնօրեայ յայտագրէն հարցազրոյց մը պիտի կատարուի համագումարին մասնակցող երիտասարդներէն մէկ քանի ներկայացուցիչներու հետ, լսելու անոնց ունեցած փորձառութիւնը եւ տպաւորութիւնները համագումարին մասին:

PRELATE WELCOMES ANTELIAS YOUTH CONFERENCE PARTICIPANTS

Under the auspices of H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, in mid-August a youth conference titled “The Youth and the Challenges

of the 21st Century” took place at the Seminary in Bikfaya, Lebanon. By the ordinance of the H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, ten youth from the Prelacy participated in the conference under the direction of Very Rev. Fr. Barthev Gulumian.

On Wednesday, September 17th, the participants met with the Prelate to thank him for the unique opportunity and to convey their thoughts on the conference. The Prelate commended them for their active participation throughout the conference as well as their commitment to their fellow youth within the Western Prelacy, encouraging them to continue on their path of service with even greater vigor.

On Sunday, September 21st, an interview with members of the delegation will air on the Prelacy weekly program on Horizon television.